ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 29 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Գևորգ Հունանյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գևորգ Հունանյանը 25.07.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «ՀՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը»:

Դիմողը գտնում է, որ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված՝ վիճարկվող դրույթով սահմանված՝ վճռաբեկ դատարան դիմելու համար նախատեսված պարտականությունը հակասում է ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների, Մար-

դու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի որոշ դրույթների՝ խախտելով արդարադատության մատչելիության և հասանելիության սկզբունքները, խոչընդոտում է անձի դատավարական իրավունքների իրացմանը՝ առաջացնելով բացասական իրավական հետևանքներ:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավական դրույթը և դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումը բավարար չափով որոշակի չէ, առկա չեն հիմքերը և ծավալները:

Դիմողը նշում է, որ ինքը զրկված է եղել պարզելու այն փաստը, որ կրկին անգամ ներկայացված վճռաբեկ բողոքին չկցելով դատավարության մասնակիցներին վճռաբեկ բողոքն ուղարկելը հավաստող ապացույցներ՝ իր դատական պաշտպանության իրավունքը կսահմանափակվի:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ա) դիմողի ներկայացրած փաստարկները հիմնականում հանգում են նրան, որ վճռաբեկ բողոքը կրկին անգամ դատավարության կողմերին ուղարկելու գործողությունն ամբողջությամբ համընկնում է ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում արտահայտված «ձևական» եզրույթի բովանդակության հետ: Դիմողը նաև մատնանշում է, որ ինքը զրկված է եղել պարզելու այն փաստը, որ կրկին անգամ ներկայացված վճռաբեկ բողոքին չկցելով դատավարության մասնակիցներին վճռաբեկ բողոքն ուղարկելը հավաստող ապացույցներ՝ իր դատական պաշտպանության իրավունքը կսահմանափակվի: Մինչդեռ դիմողի կողմից վիճարկվող դրույթի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ կայացրել է որոշում: Այսինքն՝ դիմողի ներկայացրած փաստերն առ այն, որ վիճարկվող դրույթի կիրառման արդյունքում ստեղծվել են բացասական և անհաղթահարելի իրավական հետևանքներ, կամ դրա կիրառման արդյունքում խախտվում են

արդարադատության մատչելիության և հասանելիության սկզբունքները՝ ակնհայտ անհիմն են, քանի որ առկա չէ պատճառահետևանքային կապ դիմողի խախտված իրավունքների և վիճարկվող նորմի ենթադրյալ հակասահմանադրականության միջև, ինչն էլ, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը պետք է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջն ինքնանպատակ չէ և համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով.

բ) դիմողի նկատմամբ առաջացած անբարենպաստ հետևանքներն իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Փաստորեն, դիմողը վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց, որն էլ, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմա-

նադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, հանդիսանում է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Գևորգ Հունանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

29 հուլիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-25